Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ մեղադրվող անձանց գործերի նկարագրություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Իրավական աջակցություն Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի թմրամիջոց գործածողներին, ովքեր մեղադրվում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ» ծրագրի շրջանակներում կազմակերպություն դիմած թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ մեղադրվող քաղաքացիների գործերի նկարագրություն:

N	Կազմակերպությանը դիմելու ժամանակահատվածը	Քաղաքացու անձնական տվյալները	Խնդրի նկարագրությունը	Կազմակերպության իրականացրած ուսումնասիրությունը և արդյունքները
1	2010թ. հունվարի 25-ին կազմակերպություն է զանգահարել Գ.Հ-ի հայրը և տեղեկացրել որդու խնդրի մասին: Գ.Հ-ի հայրը խնդրել է, որ կազմակերպության աշխատակիցներն այցելեն նրանց բնակարան, քանի որ Գ.Հ-ն ունի թմրամիջոցից կախվածություն, որի պատճառով գտնվում է առողջական վատ վիճակում, ի վիճակի չէ անձամբ ներկայանալ:	Գ.Հ-ն ամուսնալուծված է, ունի անչափահաս երեխա:	Գ.Հ-ն տառապում է թմրամիջոցի կախվածությունից, թմրամիջոց սկսել է գործածել 7-րդ դասարանում, ավելի շատ սկսել է օգտագործել բանակում: Հիմնականում օգտագործում է ծխելու միջոցով, 1-2 անգամ օգտագործել է ներերակային եղանակով: Թմրամիջոցի կախվածությունից ազատվելու համար փորձել է բուժում ստանալ ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» Ավանի նարկոլոգիական կլինիկայում, այնուհետև Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում, սակայն բուժումն անարդյունավետ համարելով հրաժարվել է բուժումը շարունակելուց: Ցանկանում է, որպեսզի իր համար դեղատոմս դուրս գրվի, որ առանց խոչընդոտների կարողանա ձեռք բերել դեղերը, որոնց շնորհիվ էլ ընթացքում կկարողանա հրաժարվել այդ վատ սովորությունից՝ բուժվելով թմրամիջոցի կախվածությունից:	Կազմակերպության աշխատակիցներն այցելել են Գ.Հ-ի բնակարան, զրուցել նրա հետ և տեղեկացել խնդրին: Կազմակերպությունն իր աջակցությունն է առաջարկել Գ.Հ-ին Վանաձորի հոգենյարդաբանական դիսպանսերում որպես պացիենտ հաշվառելու և բուժում իրականացնելու համար, սակայն Գ.Հ-ն հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ չի վստահում Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում արդյունավետ բուժում ստանալուն, ինչպես նաև գտնում է, որ դիսպանսերն իր տեղը չի, քանի որ նույն մասնաշենքում բուժում են ստանում նաև հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձինք:
2	2010 թ. հունվարի 27-ին կազմակերպություն է դիմել	Ա. Ս՝ ծնված 1968թ., 2 անգամ ամուսնալուծված, ունի երկու	2010թ հունվարի 26-ին Ա.Ս.-ն և նրա ընկերները նստած են եղել Գ. Հ-ին պատկանող աշխատասենյակում, երբ ոստիկանները	Կազմակերպությունն իրականացրել է Գ.Հ-ի գործով

	Ա.Ս-ի եղբայրը, հայտնել, որ եղբորը՝ Ա.Ս-ին անհիմն մեղադրում են թմրամիջոցի ապօրինի պահման համար, նույն արարքի կատարման համար մեղադրում են նաև Ա.Ս-ի ընկերներին՝ Գ.Հ-ին և Ա.Կ-ին:	երեխա, կինը մահացած է: Գ. Հ՝ ծնված 1966թ., ամուսնացած է, ունի երեք երեխա, նախկինում չդատված, երկուսն էլ չեն աշխատում: Ա. Կ՝ ծնված 1973թ., 3-4 անգամ դատապարտված :	հանկարծակի, մոտ 10 հոգով, որոնցից 2-ը՝ ոստիկանական համազգեստով, ներխուժել են Գ.Հ-ին պատկանող գրասենյակ, դատարանի կողմից տրված խուզարկության որոշման հիման վրա, սակայն խուզարկության որոշման հետ ոստիկանները չեն ծանոթացել Ա.Ս-ին, Գ.Հ-ին և Ա.Կ-ին, թեև վերջիններս ստորագրել են խուզարկության արձանագրության տակ: Խուզ արկության արդյունքում հայտնաբերվել է 1 լիտր տարողությամբ կապրոնե տարա՝ 0.5լ դեղնավուն հեղուկի պարունակությամբ /բենզին/, 1.5 լիտր տարողությամբ կապրոնե տարա՝ պատերին սպիտակավուն զանգված, 7 ներարկիչ, էմալապատ 2 տարա՝ կարմրավուն հետքերով, հեղուկ, որը, ինչպես հետո է պարզվել, պարունակել է և 0.067 գրամ կոդեին: Խուզարկությունից հետո բացատրություն են վերցրել նրանցից և երեքին էլ տարել են ոստիկանության Բազումի բաժանմունք: Այնտեղ նրանց պահել են մոտ 5 ժամ, այնուհետև՝ տարել «Նարեկ» հիվանդանոց, որտեղ նրանցից նմուշներ են վերցրել: Հետո կրկին տարել են ոստիկանության բաժին, այնտեղ պահել են ևս 3-4 ժամ, վերցրել են նրանց անձնագրերն ու ազատ արձակել: Կատարված փորձաքննության արդյունքների մասին Վանաձորի քննչական բաժանմունքի քննիչ Դավիթ Սարգսյանը ոչինչ չի տեղեկացրել կասկածյալներին: Մի քանի օր անց խուզարկվել են Գ. Հ-ի և Ա. Ս-ի բնակարանները, բայց ոչինչ չի հայտնաբերվել: Հարցաքննության ժամանակ Գ. Հ-ն հայտարարել է, որ գրասենյակում հայտնաբերված թմրամիջոցն ինքն է պատրաստել՝ իր գործածման համար, տվել է ինքնախոստովանական ցուցմունք: Գ. Հ-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել առանց իրացնելու նպատակի թմրամիջոցի ապօրինի պահման համար: Կազմակերպությունն իրականացրել է Գ. Հ-ի գործով դատաքննության մոնիթորինգ: Գ.Հ-ի գործով կիրառվել է արագացված դատաքննության կարգ, դատաքննությունն ավարտվել է, արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, նախագահությամբ Մ. Մելքոնյանի, հրապարակվել է մեղադրական դատավճիռ և Գ.Հ-ի նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք 2 ամիս ժամանակով:	դատաքննության մոնիթորինգ, մասնակցել է թվով 3 դատական նիստերի, ընդհանուր առմամբ Գ.Հ-ի գործով կազմակերպությունն իրականացրել է 2 ժամ 10 րոպե տևողությամբ մոնիթորինգ: Արդյունքում դատաքննության վերաբերյալ խախտումներ չեն արձանագրվել:

3	2010թ. փետրվարի 5-ին կազմակերպություն է դիմել Գ. Ս-ի քույրը և տեղեկացրել, որ եղբոր նկատմամբ մեղադրանք է առաջադրվել՝ թմրամիջոցի ապօրինի պահման, պատրաստման և հյուրասիրման համար:	Գ. Ս-ն ամուսնացած է, ունի 2 երեխա, նախկինում դատված, տառապում է «Սպիտակ տենդ» հիվանդությամբ, 5-6 տարի է գրանցված է Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում՝ որպես ալկոհոլից կախում ունեցող անձ, տառապում է նաև «ստամոքսի գաստրիտ» հիվանդությամբ:	Ըստ Գ. Ս-ի քրոջ՝ 2010թ հունվարի 22-ին Գուգարքի ոստիկանության բաժանմունքի 6-7 աշխատակիցներ, որոնցից մի մասն են եղել ոստիկանական համազգեստով, մտել են Գ. Ս-ի ն պատկանող խորդանոց, ընթերակաների մասնակցությամբ զննել են այն և սեղանին հայտնաբերել բաժակի մեջ լցված կանեփի խառնուրդով թմրանյութի նմանվող զանգված, որը հետագայում փարձաքննությամբ պարզվել է, որ այն իրենից ներկայացնում է հաշիշ տեսակի թմրամիջոցի յուղ: Ըստ Գ. Ս-ի քրոջ՝ ոստիկանները եղբորը խմած, «անջատված» վիճակում են բերման ենթարկել ոստիկանության բաժանմունք, եղբորը տարել են տնից՝ ասելով. «տանենք սթափվի, հետո կհարցաքննենք»: Ոստիկանները 2010թ փետրվարի 4-ին կրկին խուզարկել են Գ .Ս-ի տունը և խորդանոցը: Խորդանոցում զննել են էլեկտրական մեծ սրճաղացը, որի մեջ չորացված կանեփի փոշու մնացորդներ են հայտնաբերվել: Սրճաղացն առգրավվել է: Գ.Ս-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցի ապօրինի իրացման, պահման և պատրաստման համար, խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Գ.Ս-ի գործով նախաքննության փուլում ներգրավվել է պաշտպան Կ.Գասպարյանը: Որի պաշտպանության արդյունքում բավարար ապացույցների բացակայության հիմքով մեղադրողը հրաժարվել է թմրամիջոցի ապօրինի իրացման համար ներկայացված մեղադրանքից և Գ.Ս-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցի ապօիրինի պահման և պատրաստման համար: Խուզարկությունը կատարվել է դատարանի կողմից տրված որոշման հիման վրա և ընթերակաների մասնակցությամբ: Կազմակրպությունն իրականացրել է Գ.Ս-ի գործով դատաքննության մոնիթորինգ: Դատաքննության ընթացքում ամբաստանյալը հայտարարեց, որ ոստիկանության աշխատակիցներն իրեն բերման ենթարկելիս ծեծել են, իր խոսքերով ասած՝ «սամասուդ» են արել, սակայն որպես վկա հրավիրված Գուգարքի բաժնի ոստիկանները հերքեցին ծեծի փաստը, ինչպես նաև գործով հրավիրված վկաները, որոնք Գ.Ս-ի ընկերներն են, ևս չհաստատեցին ծեծի ենթարկվելու հանգամանքը: Գ.Ս-ին ուղղված դատավորի այն հարցին, թե ինչպիսի մարմնական վնասվածքներ են պատճառվել ծեծի արդյունքում, ամբաստանյալը որոշակի պատասխան չտվեց, միայն վերացական ասաց, որ ստացել է վնասվածքներ: Դատավորի այն հարցին, թե ինչու չի դիմել բժշկի օգնությանը, կամ բողոքել նշված ծեծի կապակցությամբ, ամբաստանյալը հստակ պատասխան չտվեց, նշեց, որ մինչ ոստիկանության բաժանմունք տանելը դեպքից անցել է 15 օր, ուստի մարմնական վնասվածքները լավացել են: Դատաքննության	Գ.Ս-ի գործով կազմակերպությունն իրականացրել է դատաքննության մոնիթորինգ, մասնակցել է թվով 14 դատական նիստերի, ընդհանուր առմամբ Գ.Ս-ի գործով կազմակերպությունն իրականացրել է 32 ժամ 50 րոպե տևողությամբ դատաքննության մոնիթորինգ: Կազմակերպությունը դատաքննության ընթացքում խախտումներ չի արձանագրել:

			ժամանակ դատախազը քաղվածքներ ներկայացրեց Վանաձոր ՔԿՀ-ի գրանցամատյաններից, որտեղ արձանագրված էր ամբաստանյալի մարմնի վրա առկա 20 տարվա վաղեմության վնասվածքները, սակայն որևէ նոր վնասվածքի մասին գրառումներ չկար, քանի որ ՔԿՀ տեղափոխելիս ամբաստանյալի մարմնի վրա բռնության հետքեր չի հայտնաբերվել: Գ.Ս-ի գործով դատքննությունն ավարտվել է և Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, նախագահությամբ Վ. Ղազարյանի, հրապարակվել է մեղադրական դատավճիռ: Գ.Ս-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 2 տարի 6 ամիս ժամանակով:	
4	2010թ. փետրվարի 15-ին կազմակերպություն է դիմել Ս.Ս-ն և հայտնել, որ իրեն անհիմն մեղադրում են թմրամիջոցի գործածման համար, սակայն ինքը երբևէ թմրամիջոց չի գործածել:	Ս.Ս ամուսնացած է, նախկինում չդատված	Ըստ Ս.Ս-ի՝ 2009թ. մայիսի 20-ին նրա բնակարան են այցելել ընկերները: Նրանք միասին ալկոհոլ են օգտագործել, որից հետո Ս.Ս-ն գնացել է քնելու: Ս.Ս-ն պարզել է, որ իր քնած ժամանակ նրա ընկերներն սկսել են թմրամիջոց պատրաստել և գործածել: Նույն օրը ժամը 16:00-ի սահմաններում ոստիկանության 15 աշխատակիցներ, որոնցից մի մասն են եղել ոստիկանության համազգեստով, ներխուժել են Ս. Ս-ի բնակարան: Վերջինս նրանց ձայներից արթնացել է քնից: Առանց դատարանի կողմից տրված խուզարկություն կատարելու որոշումը ցույց տալու, ոստիկանները խուզարկել են Ս. Ս-ի բնակարանը և առգրավելօղու բաժակ, որի մեջ լցված է եղել կասկածելի պարունակությամբ հեղուկ: Խուզարկությունից հետո բոլորին բերման են ենթարկել ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունք: Առանձին-առանձին հարցաքննել են բոլորին: Այդ օրը, նաև ողջ գիշերը նրանք մնացել են քննիչի աշխատասենյակում: Հաջորդ օրը քննիչը նրանց տարել է Երևան՝ փորձաքննության: Ս.Ս-ն և նրա ընկերները բերման ենթարկված են մնացել 1 օր, թեև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է բերման ենթարկվածի կարգավիճակում մնալ 3 ժամ: Քննիչը չի տեղեկացրել փորձաքննության արդյունքների մասին, միայն ասել է, որ Ս. Ս-ի մեզի փորձանմուշում հայտնաբերվել են թմրամիջոցի հետքեր: Ս. Ս-ն քննիչին խնդրել է տրամադրել փորձաքննության եզրակացության պատճենը, սակայն վերջինս պատասխանել է. « Ինձ չե՞ս հավատում, կարող ա՞ խաբում եմ»: Ս. Ս-ն ոստիկանության Բազումի բաժանմունքում ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը երբևէ թմրամիջոց չի գործածել և տեղյակ չի իր ընկերների կողմից թմրամիջոցի գործածման մասին: Մի քանի ամիս անց նրան կրկին կանչել են հարցաքննության, որի ժամանակ Ս. Ս-ն պնդել է իր նախկին	Ս. Ս-ի իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպությունը ներգրավել է Վանաձորի «Պոպուլեքս» փաստաբանական գրասենյակի փաստաբաններ Կ. Թումանյանին և Է. Մարուքյանին, որոնք դատաքննության ընթացքում «դատատոքսիկոքիմիական» փորձաքննության իրականացման միջնորդություն են ներկայացրել Լոռու մարզի Վարչական դատարանին: Դատաքննությունը շարունակվում է:

			ցուցմունքը: Ս.Ս-ի հարցաքննության, ցուցմունք տալու, ինչպես նաև փորձանմուշ վերցնելու ժամանակ Ս. Ս-ի իրավունքների պաշտպանության համար փաստաբան չի ներգրավվել: 22.12.2009թ որոշում է կայացվել թմրամիջոցի գործածման համար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին: 2010թ փետրվարի 12-ին Ս. Ս-ն փոստով Վարչական դատարանի կողմից արձակված վճարման կարգադրություն է ստացել, սակայն իրեն չի ուղարկվել վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ կազմված արձանագրությունը: Ներկայումս Վարչական դատարանի Վանաձորի նստավայրում ընթանում է Ս. Ս-ի գործով դատաքննությունը:	
5	2010թ. փետրվարի 23-ին կազմակերպություն են դիմել Վանաձորի բնակիչ Ս. Ս.-ի մայրն ու կինը և հայտնել, որ Ս.Ս-ն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի պահման համար:	Ս Ս-ն ծնվել է 1967 թ., ամուսնացած է, ունի 2 անչափահաս երեխա, նախկինում չդատված, ունի ստամոքսի խոց, ողնաշարի դիսկերը մաշված են, որի համար մասնակի բուժում է ստացել:	2010թ-ի հունվարի 27-ին առավոտյան 9:30-ից 10:00-ի սահմաններում 5 ոստիկաններ քաղաքացիական համազգեստով մտել են Ս.Ս.-ի տուն, որտեղ նա իր ընտանիքի հետ վարձով է բնակվում, ներկայացել են որպես ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակիցներ, ցույց են տվել խուզարկություն կատարելու համար դատարանի տրված որոշումը, ծանոթացրել ընտանիքի անդամներին և ասել, որ թաղամասում գողություն է կատարվել /գողացել են «Բիլայն»ի համակարգիչները, 18.000 դոլար և ոսկեղեն/, այդ պատճառով պետք է տունը խուզարկեն: Ոստիկանները Ս. Ս-ի բնակարան են մուտք գործել առանց ընթերակաների, այնուհետև Ս.Ս-ի հարևաններին ներգրավել են որպես ընթերակա: Ըստ Ս.Ս-ի կնոջ՝ իրենց մոտ այն տպավորությունն է ստեղծվել, որ ոստիկանները գումար կամ ոսկեղեն փնտրելու որևէ մտադրություն չեն ունեցել, քանի որ խուզարկությունն սկսելուց առաջ Ս. Ս-ի կնոջն ասել են, որ եթե բնակարանում գումար կամ ոսկեղեն կա, պահի իր մոտ: Խուզարկության արդյունքում հայտաբերվել է 250գ կանեփ տեսակի թմրամիջոց, տան բակում գտնվող մառանի տանիքից՝ ևս 10 գ: Ս.Ս.-ին ժամը 10:00-ի սահմաններում ոստիկաններն իրենց հետ տարել են ոստիկանության բաժին, որտեղ մնացել է մինչև	Կազմակերպության կողմից Ս. Ս-ի ընտանիքին տրամադրվել է բանավոր խորհրդատվություն, պարզաբանվել, որ կարող են օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից: Ս.Ս-ն նախաքննության մարմնին միջնորդություն է ներկայացրել՝ պաշտպան ներգրավելու խնդրանքով: Ս.Ս-ի կնինը կազմակերպությանը տեղեկացրեց, որ Ս.Ս-ի ներկայացրած միջնորդությունը բավարարվել է, ներգրավվել է հանրային պաշտպան:

			գիշերվա ժամը 00:00-ն: Գիշերը 00:00-01:00-ի սահմաններում քննիչը գնացել է ոստիկանության բաժին ու Ս.Ս.-ին ստորագրությամբ տուն ուղարկել՝ առավոտյան ներկայանալու պայմանով: Ս.Ս-ն բերման ենթարկած է մնացել ՀՀ օրենքով սահմանված 3 ժամից ավելին՝ մոտ 13 ժամ: 2010թ. հունվարի 28-ին առավոտյան ժամը 10:00-ին Ս.Ս.-ն ներկայացել է ոստիկանության բաժին, որտեղ նրան ձերբակալել են: Երեք օր անց կալանքի որոշում է կայացվել և Ս.Ս.-ին տեղափոխել են «Վանաձոր» ՔԿՀ: Ս.Ս-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել առանց իրացնելու նպատակի թմրամիջոցի պահման համար: Նրա հարցաքննության ժամանակ պաշտպան ներգրավված չի եղել: Կազմակերպության խորհրդով Ս.Ս-ն նախաքննության մարմնին միջնորդություն է ներկայացրել հանրային պաշտպան ներգրավելու մասին, այն բավարարվել է:: Ս. Ս-ի կինը տեղեկացրեց, որ այս գործով դատաքննությունն ավարտվել է, Ս.Ս-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 1 տարի ժամանակով:	
6	2010թ. մարտին ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել Ա. Հ-ն և հայտնել, որ ինքն անհիմն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի պահման և պատրաստման համար: Ա.Հ-ի պնդմամբ ինքը որևէ կապ չունի այդ մեղադրանքի հետ, թմրամիջոց չի պատրաստում, չի օգտագործում: Նույն ժամանակահատվածում կազմակերպությանը դիմել է նաև Ա.Պ-ն, որը մեղադրվում է թմրամիջոցի պատրաստման համար վերջինիս հավաստմամբ ինքը	Ա.Պ-ն ամուսնացած է, ունի հաշմանդամ կին:	Ըստ Ա. Հ-ի՝ ինքն ունի ուսի կոտրվածք, որի պատճառով ցավազրկող դեղամիջոցներ, այդ թվում «Սեդալգին» է օգտագործում ուսի կոտրվածքի պատճառով, իսկ իր ընկերը՝ Ա. Պ-ն, ոտքի տրոմբի պատճառով: 06.09.2009թ. Ա.Հ-ի ցավերն ուժեղացել են, ցավազրկող հաբեր չի ունեցել, առավոտյան տնից դուրս է եկել՝ հաբեր գնելու, շենքի մուտքի մոտ տեսել է Ա. Պ-ին, որն ընկերակցել է իրեն: Միասին տաքսիով գնացել են նորակառույց եկեղեցու մոտակա դեղատուն, գնել են 40 հատ «Սեդալգին» տեսակի ցավազրկող դեղահաբեր: Գնացել են Ա. Հ-ի հորդբոր տուն: Քանի որ ուժեղ ցավերի պատճառով 1-2 ցավազրկող հաբն իրենց չի օգնում, որոշել են մի քանի դեղահաբեր փշրել, գոլ ջրի մեջ լուծույթ պատրաստել և այդ եղանակով խմել, որպեսզի ցավերը մեղմանան: Էլեկտրական սալիկին մաքուր կաթսայով ջուր է դրել՝ որպեսզի եռա, այդ պահին լսել են ոտնաձայներ, կոտրելով դռան փականը՝ ներս են խուժել մի քանի ոստիկաններ, որոնց հագին	Կազմակերպությունն ուսումնասիրել է Ա.Պ-ի գործի նյութերը, լսել է 17 դատական նիստի ձայնագրությունները, վեր է հանել դատաքննության թվով 28 խախտումներ, որոնք տրամադրվել են վերջինիս պաշտպանին: /Հայտնաբերված խախատումները ներկայացվում են հավելված 1-ում /:

	թմրամիջոց չի պատրաստել: Ա.Պ-ն կազմակերպությանը ներկայացրել է իր գործին առնչվող բոլոր փաստաթղթերն, ինչպես նաև դատական նիստերի ձայնագրությունների կրիչը՝ կազմակերպության կողմից ուսումնասիրության համար:		եղել է ասֆալտ փռող աշխատակիցների համազգեստ, երկու կողմից զենք են պահել Ա. Հ-ի և Ա. Պ-ի վրա: Երբ ոստիկանները Ա.Հ-ի հորեղբոր բնակարան են մտել, այդ պահին խոհանոցի սեղանին դրված է եղել միայն փշրված վիճակում գտնվող «Սեդալգին» կոչվող դեղահաբերը: Նրանց հրամայվել է ձեռքերը գլխներին պահած պառկել: Վերջիններս կատարել են ոստիկանների ցուցումը, ոստիկանները մի քանի հոգով սկսել են Ա. Հ-ին ծեծել՝ նրան անվանելով մեկ այլ՝ «դարպասեցի Արտակ» անունով: Այդ պահին վերջինս մտածել է, որ ոստիկանները հավանաբար շփոթել են բնակարանը: Ա.Հ-ն ծեծի ընթացքում բղավել է, որ իր ուսը վիրահատված է և ուժեղ ցավում է, այդտեղ չխփեն, սակայն ոստիկանները շարունակել են ծեծել: Ծեծի ընթացքում Ա. Հ-ի ինքնագացողությունը վատացել է, այդ ժամանակ նրան է մոտեցել ոստիկաններից մեկը և ջուր տվել: Ա.Հ-ն այնքան վատ է եղել, որ ձեռքերը դողալիս են եղել և ոստիկանի ձեռքից է ջուր խմել: Ա. Հ-ին և Ա. Պ-ին տարել են առանձին սենյակներ, որտեղ նրանց հարցաքննել են: Ոստիկանները բնակարանի տարբեր հատվածներից՝ լոգարանից, պատժգամբից վերցրել են մեկ ժանգոտված թաս և մի քանի հատ շշեր, որոնցից մեկի մեջ լցված է եղել բնակարանում հայտնված որդերի համար տանտիրոջ կողմից պատրաստած նյութը, պատուհանագոգի վրայից վերցրել են բժշկական կիսալուսնաձև թաս, որը տանտերն օգտագործելիս է եղել որպես մոխրաման, դրել են խոհանոցի սեղանին: Սեղանին են դրել նաև բնակարանում եղած սոդան և աղը և Ա. Հ-ին առաջարկել են դրված նյութերն իրար խառնել և ստանալ պատրաստի թմրամիջոց: Ա. Հ-ն փորձել է հրաժարվել նյութերն իրար խառնելուց, բայց ոստիկաններն ասել են, որ եթե չանի, որպես թմրամիջոց հյուրասիրողի կտանեն, 5-7 տարի կնստեցնեն, բայց եթե իրենց ասածով անի, իրենց բաց կթողնեն, և ավելացրել են «Ո՞վ է սրա համար նստում, որ դուք նստեք, ոչ մի բան էլ չկա, դու նյութերը խառնի, ստացի պատրաստի թմրամիջոց ու տղավարի ենք ասում, քո համար լավ կլինի»: Ա.Հ-ն սպառնալիքի, վախի և խաբեության արդյունքում խառնել է նյութերը, սակայն չի իմացել, թե որ նյութից ինչքան է պետք խառնել՝ պատրաստի թմրամիջոց ստանալու համար, այդ հարցում նրան օգնել են ոստիկանության աշխատակիցները: Ա. Հ-ն ոստիկանության աշխատակիցների խաբեության և ճնշման ազդեցության տակ ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել: Այնուհետև հարցաքննել են Ա. Պ-ին, և քանի որ վերջինիս ցուցմունքներն ամբողջությամբ չեն համընկել Ա. Հ-ի ինքնախոստովանական ցուցմունքների հետ, ոստիկանները վերջինիս հարկադրել են կրկին անգամ	

			ցուցմունք տալ այնպես, որ այն համընկնի Ա. Պ-ի տված ցուցմունքի հետ: Քանի որ Ա. Պ-ն ու Ա. Հ-ն կատարել էին ոստիկանների ասածը, վերջիններիս ազատ են արձակել, բայց դեպքից մոտ 20 օր անց նրանց կանչե լ են ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունք՝ ասելով որ մի քանի բան կա ճշտելու: Բազումի բաժանմունքի հետաքննիչը Ա. Հ-ին ասել է, որ պետք է 3 օր ձերբակալված լինեն, այնուհետև դատարանը խափանման միջոց կընտրի ու նրանց նորից բաց կթողնեն: Ըստ Ա. Հ-ի՝ քանի որ առաջին անգամ քննիչը նրանց ազատ էր արձակել, մտածել է, որ այս անգամ էլ է այդպես լինելու: Ա. Հ-ն հրաժարվել է պաշտպան ունենալուց, քանի որ քննիչը Ա. Հ-ին ասել է, որ միայն 3 օր է ձերբակալված մնալու, պաշտպանն ի՞նչ պիտի անի: Առերես հարցաքննության ժամանակ Վանաձորի քննչական բաժանմունքի քննիչ Վ. Հովհաննիսյանն ինքն է թելադրել առերես հարցաքննության արձանագրությունն այնպես, որ համընկնի նախորդ ցումունքների հետ: Ա.Հ-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը, նրան տեղափոխել են «Վանաձոր» ՔԿՀ: Այդ ժամանակ Ա. Հ-ն հասկացել է, որ քննիչն իրեն խաբել է, և հրաժարվել է իր նախաքննական ցուցմունքներից, սակայն քննիչը նրան թույլ չի տվել գրավոր բողոք ներկայացնել՝ ասելով. «մեկա, էդ թղթերը մոտս գալու, կուտակվելու են, ես ոչ մի բան չեմ անելու, կարգը սա է, դու գրել , խոստովանել, ստորագրել ես, պիտի դատվես»: Ա.Հ-ն միջնորդել է իր նկատմամբ կրկնակի փորձաքննություն նշանակել, սակայն մերժվել է: Ե'վ ՀՊՎ-ում, և' ՔԿՀ-ում Ա. Հ-ի հարցաքննությունները կատարվել են երեկոյան ժամը 22:00-ից հետո: Ա.Հ-ի և Ա.Պ-ի հարցաքննությունների ժամանակ պաշտպան ներգրավված չի եղել: Պաշտպաններ Ադելինա Հակոբյանը և Կարինե Գասպարյանը ներգրավվել են նախաքննության փուլի գրեթե ավարտին: Եվ Լոռու մարզի ընդհանուր իրավասության և Վերաքննիչ քրեական դատարաններում պաշտպաններիի կողմից ներկայացված միջնորդությունները մերժվել են, անտեսվել են ներկայացրած խախտումները, որպես ապացույց են գնահատվել նախաքննության ընթացքում ձեռք բերված անթույլատրելի ապացույցները և արդյունքում Ա.Պ-ի և Ա.Հ-ի նկատմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը Մ. Հարությունյանի նախագահությամբ, կայացրել է	

			մեղադրական դատավճիռ: Պաշտպան Կ. Գասպարյանի Վերաքննիչ քրեական դատարանին ներկայացված բողոքը մերժվել է: Արդյունքում Ա.Պ-ն և Ա.Հ-ն դատապարտվել են համապատասխանաբար 2 տարի և 1 տարի 6 ամիս ժամանակով ազատազրկման:	
7	2010թ. ապրիլի 17-ին Ա.Պ-ն կազմակերպությանը նամակ է ուղարկել և հայտնել, որ անհիմն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի շրջանառության համար, Ա.Պ-ի հավաստմամբ ինքը որևէ կապ չունի առաջադրված մեղադրանքի հետ:	Ա.Պ-ն ամուսնացած է, նախկինում 7 անգամ դատված:	Ա. Պ-ն մեղադրվում է այն բանի համար, որ կալանավայում պատիժը կրելու ժամանակ իրեն պատկանող հեռախոսահամարից զանգահարել է Երևան քաղաքի տաքսու վարորդ Ա. Հ-ին, վերջինիս պատվիրել գնալ իր նշած հասցեից հանձնուք վերցնել և իրեն ուղարկել: Տաքսու վարորդը գնացել է նշված հասցեն, ինքնությունը չպարզված անձից վերցրել է հանձնուքը, որի մեջ խորոված է եղել, հանձնուքն ուղարկել է Վանաձոր՝ Վանաձոր եկող տաքսու վարորդի միջոցով: Մեկ այլ կալանավորի բարեկամի միջոցով հանձնուքը տարվել է Վանաձորի ՔԿՀ, որտեղ և հանձնուքների ընդունման բաժնում հայտնաբերվել է խոշոր չափ հանդիսացող 0,261 գր, ացետիլացված «Ափիոն» տեսակի թմրամիջոց: Ա.Պ-ի պնդմամբ ինքը որևէ կապ չունի իրեն առաջադրված մեղադրանքի հետ, երբևէ թմրամիջոց չի գործածել, նրա հավստմամբ ինքը չի զանգել որևէ տաքսու վարորդի, նրան չի պատվիրել իր համար հանձնուք բերել: Ա. Պ-ի հավաստմամբ ինքը չի ճանաչում իր դեմ ցուցմունք տված վկաներին: Ա.Պ-ի նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում նախաքննությունն ավարտվել է, նշանակվել է դատաքննություն: Եվ նախաքննության և դատաքննության փուլում Ա.Պ-ի գործով պաշտպան չի մասնակցել, Ա.Պ-ն հրաժարվել է պաշտպան ունենալուց: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ Մ.Հարությունյանի, արձակել է մեղադրական դատավճիռ, նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 1 տարի 6 ամիս ժամանակով:	Քանի որ Ա.Պ-ն կազմակերպություն է դիմել դատաքննության վերջին փուլում, մինչ այդ նրա գործով կայացվել են դատական նիստեր և դատարանը հետաձգել է դատական նիստը՝ խորհրդակցական սենյակ հեռանալու պատճառով, ուստի կազմակերպությունը հնարավորություն է ունեցել նրա գործով ներկա լինել միայն վերջին դատական նիստին, որի ժամանակ հրապարակվել է նաև վճիռը: Ընդհանուր առմամբ կազմակերպությունն Ա.Պ-ի գործով իրականացրել է 3 ժամ, 15 րոպե տևողությամբ դատաքննության մոնիթորինգ:
8	2010թ. մայիսին ծրագրի փորձագետը կազմակերպությանը տեղեկացրել է, որ Ա.Հ-ն և Հ.Խ-ն մեղադրվում են թմրամիջոցի ապօրինի պատրաստման համար	Ա.Հ-ն ամուրի է, Հ. Խ-ն՝ ամուսնալուծված, ունի մեկ երեխա	2010թ-ի մարտի կեսերին Վանաձորի Ցալկուտ թաղամասում ոստիկանության 8 աշխատակիցներ, որոնցից միայն 2-ն են եղել համազգեստով, շրջապատել են Ա. Հ-ի տնակը, որտեղ այդ պահին գտնվելիս են եղել նաև Հ.Խ-ն: Առանց դատարանի կողմից տրված խուզարկութուն կատարելու որոշման, ոստիկնները խուզարկել են Ա. Հ-ի տնակը և առգրավել 0.074 գ. զգալի չափ հանդիսացող կոդեին տեսակի թմրամիջոց: Բացատրություն տալիս Ա. Հ-ն խոստովանել է մեղքը և ասել, որ թմրամիջոցն ինքն է պատրաստել՝ իր գործածման համար:	Ա. Հ-ին և Հ.Խ-ին ծրագրի փորձագետի միջոցով խորհուրդ է տրվել օգտվել հանրային պաշտպանի ծառայությունից: Ա.Հ-ի շահերի պաշտպանության համար ներգրավվել է հանրային պաշտպան Ռուբեն Հակոբյանը, իսկ Հ.Խ-ի շահերի պաշտպանության համար՝

			Փորձաքննության արդյունքներով հաստատվել է երկուսի կողմից թմրամիջոցի գործածման փաստը: Երկուսի նկատմամբ էլ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Տվյալ գործով ներգրավված ընթերակաները եղել են նույն անձինք, ովքեր մասնակցել էին նաև Վ. Չ-ի բնակարանի խուզարկությանը:*/Տես գործ 9/:* Ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության՝ անձին 1000 դրամ է վճարվում, որպես ընթերակա ներգրավելու դիմաց: Ա.Հ-ի և Հ.Խ-ի գործով ապացույցները ձեռք են բերվել անօրինական ճանապարհով, մասնավորապես՝ հետաքննական մարմնի աշխատակիցը մինչ քրեական գործ հարուցելը կատարել է բնակարանի զննում , ինչի իրավունքը չի ունեցել, բնակարանի զննություն կատարելիս էապես խախտվել են այդ գործողության դատավարական կարգը, ինչպես նաև արդյունքերն ամրապնդելիս չեն պահպանվել օրենքի պահանջները, ընթերականերին չի բացատրվել նրանց իրավունքներն ու պարտականությունները, քննիչը հարցաքննել է ընթերականերին վերջիններիս մասնակցությամբ իրականացված քննչական գործողությունների ընթացքի վերաբերյալ, որով լրացվել է այն թերությունները, որոնք զննության ժամանակ թույլ են տվել հետաքննության մարմնի աշխատակիցները: Ա.Հ-ի և Հ.Խ-ի հարցաքննությունների, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման ժամանակ պաշտպան չի մասնակցել:	փաստաբան Լ. Դոխոյանը: Հանրային պաշտպան Ռուբեն Հակոբյանի իրականացրած պաշտպանության արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ Ն,.Հովակիմյանի, հրապարակել է արդարացման դատավճիռ:
9	2010թ. մայիսի 24-ին ծրագրի փորձագետը կազմակերպությանը հայտնել է, որ Վ.Չ-ն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի պահման և պատրաստման համար, ինչպես նաև տեղեկացրել է, որ Վ.Չ-ն թմրամիջոցի կախվածությունից ազատվելու համար ցանկանում է բուժում ստանալ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում:	Վ. Չ. ծնվել է 1970թ., ամուսնացած է, ունի 2 անչափահաս երեխա, նախկինում չդատված:	2010թ ապրիլի 27-ին ժամը 18:20-ին Վանաձորի ոստիկանության բաժնում անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Վարդանանց փողոցի բնակարաններից մեկում թմրամոլներ են հավաքվել և հնարավոր է, որ թմրամիջոց են պատրաստում: Նույն օրը թմրանյութ պատրաստելու կասկածանքով բերման են ենթարկվել Պ. Բ-ն, Հ. Մ.-ն և Վ. Չ-ն, իսկ նշված բնակարանի խոհանոցից հայտնաբերվել և առգրավվել է թմրամիջոցի նմանվող զանգված, ինչպես նաև թմրամիջոցի պատրաստման և օգտագործման համար անհրաժեշտ պարագաներ: Վ. Չ.ն հայտարարել է, որ հայտնաբերվածը պատկանում է իրեն: Վ. Չ-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցի ապօրինի պահման և պատրաստման համար, վերջինս ընդունել է մեղքը, տվել է ինքնախոստովանական ցուցմունք: Վ. Չ-ն ցանկանում է բուժվել թմրամիջոցի կախվածությունից, սակայն անձնագիրը վերցրել են ոստիկանության	Կազմակերպության կողմից խորհուրդ է տրվել անհապաղ պաշտպան ներգրավվել: Քանի որ Վ.Չ-ն ընդունել է մեղքը և հայտարարել, որ հայտնաբերվածը պատկանում է իրեն, ուստի նրան տեղեկացվել է նաև, որ իրավունք ունի արագացված դատական կարգի կիրառման միջնորդություն ներկայացնել, բացատրվել է, որ արագացված կարգի կիրառման դեպքում դատարանում չեն հետազոտվում ապացույցները և այդ դեպքում նշանակված պատիժը չի կարող գերազանցել պատժի առավելագույն չափի

			բաժանմունքում, որի պատճառով չի կարողացել Լոռու մարզային հոգենյադաբանական դիսպանսերում գրանցվել որպես պացիենտ և բուժում ստանալ՝ թմրամիջոցի կախվածությունից ազատվելու համար:	2/3-ը: Կազմակերպությունը Վ. Չ-ին աջակցություն է ցուցաբերել նաև անվճար բուժօգնություն ստանալու հարցում: 2010թ մայիսի 24-ին կազմակերպությունը տեղեկացվեց այն մասին, որ Վ. Չ-ն ցանկանում է ինքնակամ բուժում ստանալ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, որտեղ սակայն հրաժարվել են առանց անձնագրի նրան հաշվառել որպես պացիենտ և բուժում իրականացնել: Գործող պրակտիկայի համաձայն՝ Վ. Չ-ի անձնագիրը գտնվում էր ոստիկանության բաժնում, քանի որ նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել և անձնագրին փոխարինող փաստաթուղթ ոստիկանության բաժնում չի տրամադրվել: Կազմակերպության ղեկավարը ծրագրի փորձագետի հետ կարողացել են ոստիկանության քննչական բաժնից ստանալ Վ. Չ-ի անձնագիրը՝ այն հետ վերադարձնելու պայմանով: Կազմակերպության ղեկավարի անձնական երաշխավորությամբ Վ. Չ-ին ընդունել են Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր՝ ստացիոնար բուժում ստանալու, որից հետո

				քաղաքացու անձնագիրը կրկին վերադարձվել է ոստիկանության քննչական բաժին: Արդյունքում Վ.Զ-ն բուժում է ստացել Լոռու մարզային հոգենյարդաբանան դիսպանսերում:
10	2010թ. օգոստոսի 12-ին կազմակերպություն է դիմել Հ.Պ-ի մայրը և հայտնել, որ որդին անհիմն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի շրջանառության համար, սակայն Հ.Պ-ի մոր հավաստմամբ՝ իր որդին որևէ կապ չունի առաջադրված մեղադրանքի հետ: Ա.Մ-ի խնդրին ծանոթացել ենք ծրագրի փորձագետի օգնությամբ	Ա.Մ. ամուսնացած է, նախկինում 4 անգամ դատապարտված: Հ.Պ-ն ամուսնացած է, նախկինում չդատված, ունի «Հեպատիտ Շ» կոչվող հիվանդությունը:	2010թ-ի հուլիսի 15-ին Ա. Մ-ի բնակարանից դուրս գալիս, շքամուտքում նա կանգնեցվել է ոստիկանների կողմից և բերման է եթարկվել ոստիկանության բաժին: Անձնական խուզարկության ժամանակ Ա.Մ-ի գպանից թմրամիջոց է հայտնաբերվել: Ոստիկանները մի քանի անգամ ապտակել են Ա Մ-ին և ստիպել ցուցմունքներ տալ՝ և գրել, որ թմրամիջոցն իրեն հյուրասիրել են: Ա. Մ-ն ճնշման արդյունքում հայտարարել է, որ իբր թմրամիջոցն իրեն հյուրասիրել է Հ. Պ-ն: Սակայն իրականում նրան ոչ ոք չի հյուրասիրել: Ա. Մ-ին բերման ենթարկելու ժամանակ ոստիկանները վերցրել են նրա հեռախոսը, և նրանում գտնվող հեռախոսահամարներից զանգել մի քանի անձանց, որոնք հավանական թմրամիջոց գործածողներ են, որոնց անունները ոստիկաններին ծանոթ են եղել, և Ա. Մ-ի անունից թմրամիջոց են առաջարկել նրանց: Ըստ Հ. Պ-ի մոր տված տեղեկության՝ հուլիսի 15-ին կեսօրի մոտ դուռը թակել են, մինչ նա կգնար դուռը բացելու, բնակարան են ներխուժել քաղաքացիական համազգեստով 4 անձ, առանց ներկայանալու, վկայական և բնակարանի խուզարկություն կատարելու համար դատարանի որոշումը /խուզարկության օրդեր/ ցույց տալու, խուզարկել են բնակարանը, որի արդյունքում որոշ առարկաներ են հայտնաբերել և առգրավել /բենզինի անհայտ խառնուրդով լուծույթով 22ներ/: Հ. Պ-ի ձեռքերը ոլորել են ու առանց որևէ բացատրություն տալու նրան տարել անհայտ ուղղությամբ: Բերման ենթարկելու ժամանակ Հ.Պ.-ն գտնվել է թմրամիջոցի ազդեցության տակ: Որդուն տանելուց հետո մայրը մի քանի օր նրա մասին ոչ մի տեղեկություն չի ունեցել: Քանի որ իրենց բնակարանը գտնվում է ոստիկանության շենքի հարևանությամբ, նա գնացել է այնտեղ և հարցրել, թե արդյոք որդին այնտեղ է գտնվում: Ոստիկանության բաժնում պատասխանել են, որ նրա որդին այնտեղ է և նա կարող է նրա համար ուտելիք տանել: Մի քանի օր մնալով ոստիկանությունում՝ Հ. Պ-ի վիճակը վատանում է, նա ընկնում է թմրասովի /լոմկայի/ մեջ: Վերջինս նաև 1993թ-ից տառապում է լյարդի ցերոզով, որի հետևանքով առաջացած	Կազմակերպության կողմից Հ. Պ-ի մորը խորհուրդ է տրվել լրացուցիչ ցուցմունք գրել, որտեղ Հ.Պ-ն փաստերը կներկայացնի իրականությանը համապատասխան, ինչպես նաև կհայտնի, որ ինքը Ա. Մ-ին թմրամիջոց չի հյուրասիրել, իսկ նախկին ցուցմունքը գրել է թմրասովի վիճակում, և քննիչից Ա. Մ.ի հետ նոր առերեսում պահանջի: Կազմակերպությունը նաև խորհուրդ է տրվել օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից: Ա.Մ-ն և Հ.Պ-ն օգտվել են կազմակերպության կողմից տրված խորհրդից՝ նախաքննության մարմնին միջնորդություն են ներկայացրել՝ հանարային պաշտպան ներգրավելու մասին: Ելնելով վերջիններիս սոցիալական պայմաններից՝ նրանց շահերի պաշտպանության համար ներգրավվել են հանրային փաստաբաններ Մ. Ղարագյոզյանը և Լ.Գոգինյանը: Այս գործով ևս կազմակերպության կողմից իրականացվել է դատաքննության ընթացքի

			ցավը մեղմելու համար պարբերաբար տարբեր տեսակի դեղամիջոցներ է օգտագործում: Մի անգամ կալանավայրում գտնվելու ժամանակ այնպես է վիճակը վատացել, որ նրա համար շտապօգնություն են կանչել: Քանի որ Հ. Պ-ի վիճակը վատ է եղել, նրա միակ ցանկությունը պառկած վիճակում մնալն է եղել: Ուստի ոստիկանության աշխատակիցները, օգտվելով նրա անօգնական վիճակից, ստիպել են, որ ցուցմունք գրի և խոստովանի, որ բացի իր օգտագործման համար թմրամիջոց պատրաստելուց, նա նաև հյուրասիրել է ուրիշներին: Հ. Պ-ն, ցանկանալով շուտ պառկել, ստիպված ստորագրել է քննիչի կողմից գրված խոստովանական ցուցմունքի տակ: Հ. Պ-ի և Ա.Մ-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցի ապօրինի շրջանառության և առանց իրացնելու նպատակի թմրամիջոցի ապօրինի պահման համար: Կազմակերպությունն իրականացրել է դատաքննության մոնիթորինգ: Դատաքննության ընթացքում Հ.Պ-ն մասնակի ընդունեց մեղքը, սակայն պաշտպանի հետ ընդմիջման ժամանակ խորհրդակցելուց հետո լիովին ընդունեց մեղքը և կիրառվեց արագացված դատաքննության կարգ: Լուռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ Մ.Մելքոնյանի, արձակել է մեղադրական դատավճիռ, որը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Հ.Պ-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի ժամանակով, Ա.Պ-ի նկատմամբ՝ ազատազրկում 6 ամիս ժամանակով:	մոնիթորինգ, կազմակերպությունը մասնակցել է 2 դատական նիստերի, ընդհանուր առմամամբ իրականացրել է 1 ժամ 20 րոպե դատաքննության մոնիթորինգ: *Այս գործով մինչ դատաքննությունը բացահայտվել է նաև, որ որոշ հանրային պաշտպաններ խիստ բացասական վերաբերմունք ունեն թմրամիջոց գործածողների նկատմամբ և խուսափում են ստանձնել նրանց պաշտպանությունը: Նրանց համար թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն ու բռնաբարությունը նույն կարգի հակահասարակական արարքներ են համարվում:*
11	2010թ. սեպտեմբերի 10-ին կազմակերպություն են դիմել Ա. Ս.ի հարազատները և տեղեկացրել, որ վերջինիս մեղադրում են թմրամիջոցի իրացման և պահման համար:	Ա.Ս ծնվել է 1962թ., ունի «լյարդի ցեռոզ», կոչվող հիվանդությունը, հաշվառված է հոգենյարդաբանական դիսպանսերում, ամուսնացած է, ունի 2 երեխա, որոնցից մեկը՝ անչափահաս: Ա. Ջ-ն ունի հաշմանդամության 2-րդ խումբ, բուժում է ստացել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում:	2010թ-ի օգոստոսի 13-ին ոստիկանության Բազումի բաժանմունքի մի քանի աշխատակիցներ Վանաձորի Դիմաց թաղամասի «Տիրի» մոտ մոտեցել են Ա. Ս-ին, որի հետ այդ ժամանակ եղել է Ա. Ջ-ն, Ոստիկանների մոտենալու ժամանակ Ա. Ս-ն եղել է հարբած վիճակում, նրա մոտ եղել է կանեփ տեսակի թմրանյութ, որը, տեսնելով, որ իրենց են մոտենում ոստիկանները, հանել է գրպանից և դեն նետել: Ա. Ս-ին և Ա. Ջ-ին ոստիկանները բերման են ենթարկել ոստիկանության Բազումի բաժանմունք, որտեղ նրանցից բացատրություն են վերցրել: Ոստիկանության բաժնում ոստիկաններն արդեն իսկ խմած վիճակում գտնվող Ա. Ս-ին օղի են հյուրասիրել և ստիպել, որ ցուցմունքում նշի, որ թմրանյութը մտադիր է եղել փոխանցել Ա.Ջ-ին: Ա. Ս-ն այդպես էլ գրել է իր բացատրության մեջ, Ա Ջ-ին էլ ասել է. «ինչ ասում են,	Կազմակերպությունը խորհուրդ է տրվել փոխել պաշտպանին և մեկ այլ պաշտպան ներգրավելու միջնորդություն ներկայացնեն նախաքննության մարմնին: Ա.Ս-ն պաշտպանից հրաժարվելու միջնորդություն չի ներկայացրել:

			գրի, գնանք»: Վերջիններս գրել են ցուցմունքը և գնացել տուն: 10 օր անց Ա. Ս-ին նորից կանչել են ոստիկանության բաժին, փորձանմուշ վերցրել ու խափանման միջոց ընտրել: Մոտավորապես 10 օր անց կատարել են Ա. Ս-ի բնակարանի խուզարկություն, որտեղից հայտնաբերել են 3.28 գ. «մարիխուանա» տեսակի թմրանյութ: Ա. Ս-ի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցի իրացման և պահման համար, թեև նրա հավաստմամբ ինքն ընդամենը պահել է դրանք: Նախաքննության ընթացքում մոտ 20 օր Ա. Ս-ն պաշտպան չի ունեցել, Վանաձորի քննչական բաժանմունքի քննիչ Կ. Խանումյանն ասել է, որ Ա.Ս-ին պաշտպան պետք չէ, քանի որ վերջինս ծանր հանցանք չի գործել: Հետագայում հարազատների խորհրդով Ա. Ս-ն ցանկացել է հանրային պաշտպան ունենալ: Որպես հանրային պաշտպան է ներգրավվել Լ. Գոգինյանը, որը 2 ամսվա մեջ միայն մեկ անգամ է այցելել Ա. Ս-ին՝ այն էլ 5 րոպեով: Ա.Ս-ի հարազատները շատ դժգոհ են Լ. Գոգինյանի իրականացրած պաշտպանությունից, քանի որ նրանց հավաստմամբ պաշտպանն արդյունավետ պաշտպանություն չի իրականացրել: Ա.Ս-ի գործով դատաքննությունն ավարտվել է, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահության Վ.Ղազարյանի, արձակել է մեղադրական դատավճիռ, Ա.Ս-ն դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամանակով:	
12	2010թ. սեպտեմբերի 25-ին կազմակերպություն են դիմել Ա.Պ-ի հարազատները և հայտնել, որ Ա.Պ-ն անհիմն մեղադրվում է թմրամիջոցի ապօրինի շրջանառության	Ա.Պ-ն ամուրի է, ունի զառամյալ ծնողներ և հաշմանդամ եղբայր	Ըստ Ա.Պ-ի հարազատների՝ 2010 թ-ի օգոստոսի 5-ի գիշերը լույս 6-ի առավոտյան, Ա. Պ-ին պատկանող տնակի դուռը կոտրելով, ինչպես նաև պատուհանից տնակ են ներխուժել ոստիկանության 8 աշխատակիցներ: Մի քանի հոգու ձեռքին անգամ զենք է եղել: Ոստիկանները, ներս մտնելով, 3-ին՝ Ա.Պ-ին, նրա հաշմանդամ եղբորը և ընկերոջը՝ Կ.Ա-ին, ստիպել են	Քննիչն Ա.Պ-ի հարազատներին տեղեկացրել է, որ Ա.Պ-ի շահերի պաշտպանության համար ներգրավվել է հանրային պաշտպան, սակայն վերջինիս անուն ազգանունը չի հայտել,

	համար, թեև Ա.Պ-ն ըստ հարազատների՝ թեև Ա.Պ-ն պահել է թմրամիջոց, սակայն երբևէ որևէ մեկին չի հյուրասիրել, չի իրացրել:		պառկել, և ասել են, որ եթե շարժվեն, կկրակեն: Խուզարկության արդյունքում տնակից թմրամիջոց է հայտնաբերվել: Ոստիկանները երեքին էլ տարել են ոստիկանության բաժին, այնտեղ Ա. Պ-ն խոստովանել է, որ հայտնաբերվածն իրեն է պատկանում, սակայն ինքը Կ. Ա-ին չի հյուրասիրել: Ոստիկաններն Ա.Պ-ին ասել են, որ եթե ուզում է տուն գնալ, պետք է ցուցմունքում գրի, որ պատրաստվում էր թմրամիջոցը հյուրասիրել Կ. Ա-ին: Ա. Պ-ն պնդել է, որ նման բան չկա, սակայն ոստիկաններն ստիպել են՝ ասելով. «Ինչ ասում ենք, այն էլ գրիր, որ եղբորդ հետ տուն գնաք, մենք էլ գնանք հանգստանանք»: Ոստիկաններն ասել են, որ Ա.Պ-ն հանցագործ չէ, ոչ մարդ է սպանել, ոչ էլ գողություն արել: Քանի որ առաջին անգամ է նման բան արել, իրեն ոչինչ չեն անի: Ա. Պ-ն ճնշումների ներքո գրել է, որ նախկինում մի քանի անգամ հյուրասիրել է Կ. Ա-ին, այդ օրը ևս պատրաստվում էր հյուրասիրել, սակայն չի հասցրել, քանի որ ոստիկանները ներս են մտել: Դրանից հետո Ա. Պ-ին և եղբորը ազատ են արձակել: Դեպքից հետո Ա.Պ-ին մի քանի անգամ կանչել են ոստիկանության բաժանմունք, նա 10 րոպում ներկայացել է: Կրկին զանգել և հրավիրել են ոստիկանություն, վերջինս ներկայացել է, որտեղ նրան հայտնել են, որ ձերբակալված է, քանի որ դատավորն է այդպես կարգադրել: Ա. Պ-ն 01.10.10թ կալանավորվել է՝ դատրանի կողմից տրված կալանքի որոշման հիման վրա: Վերջինս «Վանաձոր» ՔԿՀ-ում հացադուլ է հայտարարել, քանի որ նրա արարքը սխալ է որակվել, ինքը թմրամիջոցը միայն գործածել է, սակայն երբևէ այն չի հյուրասիրել: Քննիչն Ա.Պ-ի ցուցմունք գրելու և հարցաքննության ժամանակ նրան ասել է, որ պետք չէ պաշտպան ունենալ, քանի որ լուրջ գործ չէ, նրան առնվազն կտուգանեն, եթե դատարանում պնդի այն, ինչ գրված է ցուցմունքում և խնդրի, որ իրեն ներեն, և որ այդպիսի բան էլ չի կրկնվի: Որոշ ժամանակ անց Ա.Պ-ն նախաքննության մարմնին միջնորդություն է ներկայացրել՝ հանրային պաշտպան ներգրավելու մասին: Միջնորդությունը բավարարվել է, ներգրավվել է հանրային պաշտպան:	քանի որ իրեն ևս հայտնի չի եղել: Ա.Պ-ի հարազատները կազմակերպությանը միայն խնդել են իմանալ, թե Ա.Պ-ի շահերի պաշտպանության համար ո՞ր հանարային պաշտպանն է ներգրավվել, որպեսզի կարողանան խորհրդակցել վերջինիս հետ: Կազմակերպությունը դիմել է հանրային պաշտպանի գրասենյակ՝ պարզել պաշտպանի անուն ազգանունը և հայտնել Ա. Պ-ի հարազատներին: